10

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ

ԸՆՏՐԵԼԻՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԱՀԵՐԻ ՆԱԽԱՆ-
ՁԱԽՆԴԻՐ ԱՆՁԻՆՔՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ԳՐԵՑ

ԱՐՄԵՆԱԿ ՍԻՍՆԻ

(Բ. ԳՈՐԾ)

«Թէ կախաղան ես բարձրացրած
«Անարդ մահով կը պատժուեմ,
«Դարձեալ ցմահուանս վերջին բոպէս
«Աղաչօրէն կը խօսեմ...
«Թող անօրէնն իւր կրքերին
«Զոհէ անձս անպաշտպան,
«Ի՞նչ նշանաբանն է լինել
«Հեզ զինուոր ճշմարտութեան»...

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Լ. Գ. ԿՐԱՄԱՐԵՆԿՈՅ.
1884

281.6
Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ

ԸՆՏՐԵԼԻՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԱՀԵՐԻ ՆԱԽԱՆ-
ՁԱԽՆԴԻՐ ԱՆՁԻՆՔՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ԳՐԵՑ

ԱՐՄԵՆԱԿ ՍԻՍՆԻ

(Բ. ԳՈՐԾ)

«Թէ կախաղան ես բարձրացրած
«Անարդ մահով կը պատժուեմ,
«Դարձեալ ցմահուանս վերջին րոպէս
«Ազատօրէն կը խօսեմ...
«Թող անօրէնն իւր կրքերին
«Զոհէ անձս անպաշտպան,
«Ի՞նչ նշանաբանն է լինել
«Հեզ զինուոր ճշմարտութեան»...

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Լ. Գ. ԿՐԱՄԱՐԵՆԿՈՅԻ.
1884

Ա 758

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻՆ

ԽՈՐԻՆ

ՅԱՐԳԱՆՔՈՎ

ՆՈՒԷՐ

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻՆ

Ձեզ յայտնի է, որ ներկայումս մեր Ազգը զբաղուած է կաթուղիկոսական ընտրութեան հարցով. նոյնպէս քաջ յայտնի է, թէ այդ պաշտօնի գլուխ անցնողի արժանաւորութիւնը որպիսի մեծ նշանակութիւն ունի մեզ համար։ Եւ որովհետև այս խնդրի բարեյաջող վճիռը կախուած է գլխաւորապէս Ձեզանից, ուստի Ձեր խորին ուշադրութիւնը հրաւիրելով ներկայ գրուածքիս վերայ, որը և ձգտում է այդ նպատակին, և յուսալով, որ Դուք, իբրև ազգի ներկայացուցիչներ արժանաւորապէս կը կատարէք Ձեր պարտականութիւնը և կ՚արդարացնէք Ձեզ վրայ դրած մեր բոլորիս յոյսերը, ուստի ինձ քաղցր է թւում գրքոյկիս ճակատը պսակել Ձեր Վսեմափայլ Անունով...

Дозволено Цензурою 18 Января 1884 года

Тип. Л. Г. Крамаренко. Пом. на Мух. ул. д. № 13

Մի ոք յերեխայից, մի ոք 'ի թերահաւատից, և մի ոք յապաշխարողաց և յանմաքրից մերձեսցի յԱստուածային խորհուրդս։—Ողջոյն տուք միմեանց 'ի համբոյր սրբութեան. և որք ոչ էք կարողք հաղորդել Աստուածային խորհրդոյս՝ առ դրունս ելէք և աղօթեցէք...— Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք և սրբութեամբ հաղորդեցարուք...

(պատար. արարող.)

Մօտենում է այն օրը, երբ Հայ ազգը պէտք է վճռէ մի շատ նշանաւոր խնդիր. 1884 թ. Մայիս ամսին հայերս պէտք է ընտրենք կաթուղիկոս և բարձրացնենք Լուսաւորչեան Գահի-Էջմիածնի Աթոռի վերայ։ Զը նայելով, որ մենք շատ ժամանակ ունէինք այդ նշանաւոր խնդիրը ուսումնասիրելու համար, բայց ընդհանրապէս շատ քիչ բան չինեցինք։ Այդպիսի դէպքերում գլխաւոր պարտականութիւնը ընկնում է մամուլի կամ հրապարակախօսների վերայ, որոնք կարող են և պարտաւոր են ընթերցող հասարակութեան ծանօթացնել խնդրի մանրամասնութեան հետ։ Բայց փոխանակ լուրջ կերպով հարցը ու-

սումնասիրելու, ռուսա-հայոց և տաճկա-հայոց մամուլները փոխադարձապէս սկսեցին մեղադրել միմեանց դէպի խնդիրը ունեցած պարտազանցութեան և կողմնապահութեան մէջ։ Երկու կողմերի հրապարակախօսները վերաբերուեցին միմեանց նոյն ձևով։ Գործի տաք ժամանակ այդպիսի վարմունքը և առանց խնդիրը մշակելու նրա վճռին մօտենալը մեծ յանցանք է գործողների կողմից։

Հայ ազգը իւր բազմամեայ փորձերից պէտք է համոզուած լինի, որ առանց ծանր և խելացի մտածութեան, առանց նախատեսելու ծանր գործին ձեռնարկելը, շատ վատ հետևանքներ է ունենում։ Փորձառութեան այդ դառն բաժակները հայերս ընդունել ենք շատ անգամ բայց կարծես թէ դեռ ևս չենք կամենում խրատուել անցեալի դասերից, կարծես թէ չենք կամենում ուղղել մեր նախընթաց սխալները։ Դառնութեան բաժակի ծանրութիւնը մեզ զգալի է միայն նոր, տաք ժամանակ, բայց երբ նորը հնացաւ, տաքը սառեց, կարծես թէ մենք էլ մոռանում ենք նորից զգացած դառնութիւնը և ապազայում էլի շարունակում ենք մեր նախընթաց սխալ ուղղութիւնը։ Հայերս շնորհիւ երկպառակութեան և տարբեր կուսակցութիւնների բաժանման ընդունակ ենք մեծ սխալներ գործելու և այդ մեծ սխալները մենք արել ենք

շատ անգամ։ Ահա այժմ մի մեծ խնդիրն էլ դրուած է մեր առաջ. մենք պէտք է ընտրենք կաթուղիկոս. կո՞ւղղենք արդեօք մեր նախնեաց սխալները այդ մեծ խնդրի վերաբերութեամբ, թէ՞ կը շարունակենք մի և նոյն սխալ ուղղութիւնը,—այդ ցոյց կը տայ մօտաւոր ապագան։

Էջմիածնի կաթուղիկոսը մէկ մասնաւոր վիճակի պաշտօնեայ կամ հայ ժողովրդի միայն մի մասի առաջնորդ չէ, որ նրա ընտրութեան գործին նայէինք կողմնակի կերպով, այլ նա համարվում է ընդհանուր հոգևոր առաջնորդ և հովիւ բոլոր այն լուսաւորչական հայերի, որոնք գտնվում են Ռուսաստանի, Տաճկաստանի, Պարսկաստանի, Հնդկաստանի և Ռումինիայի իշխանութիւնների ներքոյ, այլ և երկրագնդի բոլոր տեղերում։ Նրա բարոյական ազդեցութիւնը և գերիշխանութիւնը տարածվում է և Տաճկաստանում երկու պատրիարքների (Կ. Պոլսի և Երուսաղէմի) և երկու կաթուղիկոսների (Սիսի և Աղթամարի) վերայ։ Պարսկաստանի և Հնդկաստանի թեմական առաջնորդները նոյնպէս ստորադրուած են նրա իրաւասութեան։ Էջմիածնի կաթուղիկոսը միակ պաշտօնեայ է Հայ ազգի մէջ, որը իրաւունք ունի եկեղեցական ծանրակշիռ հարցեր վճռելու։ Այժմ տեսնենք, թէ ինչպիսի արժանաւորութիւնների տէր մարդ է հարկաւոր այս մեծ պաշտօնի համար։

Մեր անցեալում և շատ մօտիկ անցեալում ունեցել ենք այնպիսի դէպքեր, որ կաթուղիկոսի ընտրութիւնը կատարուել է անգիտակցաբար կերպով։ Ընտրելին չէ գիտացել, թէ ինչի համար է ընտրվում և ինչ պարտաւորութիւններ է դրած իր վրայ, իսկ ընտրողներն էլ նոյնպէս չեն գիտացել, թէ ինչի համար են ընտրում և ինչ պէտք է պահանջեն նորանից։ Գործը կատարուել է միայն ձևական կերպով, որովհետև յայտնի է եղել, որ այդպիսի ընտրութիւնը կատարուել է և անցեալում, բայց թէ ինչի համար դրա մասին շատ էլ չեն հետաքրքրուել, այլ ամեն բան կատարել են աւանդութիւնների հիման վրայ։ Հասկանալի է, որ այդպիսի դրութեամբ ընտրած կաթուղիկոսը արժանաւոր մարդ չէր կարող լինել և հետևապէս իւր պաշտօնն էլ անկարող կը լինէր օրինաւոր կառավարել։ Բայց այդ ժամանակը անցաւ անդառնալի։ Չը նայելով, որ այդպիսի դէպքերից մի քանիսի կատարուած ժամանակից անցել են տասն և հինգ կամ քսան տարիներ, բայց համեմատաբար այդ կարճ միջոցում շատ բան է փոխուել։ Երևակայական անցեալից մենք փոխուել ենք գիտակցական ներկայի մէջ։ Եթէ մօտիկ անցեալում մենք գործել ենք անգիտակցաբար, դա այլ ես անկարելի է ներկայումս։ Բայց դառնանք կաթուղիկոսացուի

արժանաւորութեան և տեսնենք նոյնպէս թէ ի՞նչ պաշտօններ ունի նա կառավարելու մեր մէջ։

Շատերը այնքան համեստ են, որ բաւականանում են այսքանով, թէ կաթուղիկոսացուն փոքր ինչ ծանօթ լինի իւր ազգային—եկեղեցական պատմութեան, փոքր ինչ էլ սէր ունենայ դէպի նրանց և հաւատարիմ լինի իւր պաշտօնի մէջ։ Սրանք այնպիսի արժանաւորութիւններ են, որոնց պէտք է պահանջել և գիւղական յետին ժամկոչից, բայց կաթուղիկոսացուի համար այսքանը բաւական չէ։

Մեր եկեղեցական բոլոր հիմնարկութիւնները, մեր ամբողջ հոգևորականութիւնը, մեր թէ ներքին և թէ արտաքին բոլոր հոգևորական գործերը գտնվում են կաթուղիկոսի կառավարութեան ներքոյ, և որպէս զի այդ բոլոր գործերը իւրեանց կարգի և կանոնի մէջ դրուած լինեն և մեր ժամանակակից պահանջներին համապատասխանեն, - կաթուղիկոսը պէտք է ունենայ կառավարչական ընդունակութիւն։ Մեր եկեղեցին իր ներքին և արտաքին կազմակերպութեամբ գտնվում է նոյնպէս կաթուղիկոսի կառավարութեան ներքոյ, և որպէս զի եկեղեցին և ժողովուրդը փոխադարձապէս հասկանան միմեանց կարիքները և սիրեն միմեանց,—կաթուղիկոսը պէտք է լաւ տեղեակ լինի եկեղեցական կարգերին և պատմու-

թեան, և որ ամենագլխաւորն է պէտք է ծանօթ լինի Աստուածաբանութեան։ Մեր բոլոր կրթական գործերը, մեր բոլոր ուսումնարանները գտնվում են կաթուղիկոսի կառավարութեան ներքոյ, և որպէս զի այդ հիմնարկութիւնները հետևէն առաջադէմ սկզբունքներին և համապատասխանեն ժողովրդի ժամանակակից պահանջներին,— կաթուղիկոսը պէտք է ծանօթ լինի մանկավարժութեան։ Մեր ազգային—եկեղեցական կալուածները, մեր նիւթական բոլոր աղբիւրները գտնվում են կաթուղիկոսի կառավարութեան ներքոյ, և որպէս զի մեր այդ աղբիւրները կանոնաւորուեն և մեր աղքատ գումարները խնայողաբար և նպատակայարմար կերպով գործածուեն, — կաթուղիկոսը պէտք է ծանօթ լինի տնտեսագիտութեան։ Որովհետև կաթուղիկոսը իւր ցրուած ժողովրդի վերայ քաղաքականապէս իշխող պետութիւնների հետ իր պաշտօնին վերաբերեալ գործերի մասին յարաբերութիւն ունեցող մարդն է, և որպէս զի այդ մարդը կարողանայ իր ժոզովրդի և նրա վրայ իշխող մի որ և է պետութեան շահերը միմեանց հետ համաձայնութեան մէջ պահել և նրանց մէջ փոխադարձական սէր և համերաշխութիւն պահպանել,—կաթուղիկոսը պէտք է ծանօթ լինի քաղաքագիտութեան։ Կաթուղիկոսը որպէս սուրբ գրքերի հետ գործ ունեցող մարդ, լաւ է եթէ

գիտենայ կլասիքական լեզուներից—յունարէնը, լատիներէնը և եբրայեցերէնը։ Իսկ որպէս Էջմիածնին տիրող պետութեան պաշտօնական լեզուն, պէտք է լաւ գիտենայ ռուսերէնը. պէտք է գիտենայ և եւրոպական լեզուներից գոնէ մէկը, աւելի հարկաւոր է ֆրանսիէրէնը։ Նա պէտք է ունենայ և գրականական արժանաւորութիւն. պէտք է իւր աշխատութիւններով յայտնի լինի գրականութեան մէջ։ Բացի այս բոլորից կաթուղիկոսը պէտք է լինի յայտնի և համակրութիւն վայելող անձնաւորութիւն, որպէս զի կարողանայ իւր բարոյական ազդեցութեամբ, իւր ցրուած ժողովրդի մէջ պահպանել բարոյական կապ և ազգային համերաշխութիւն։ Կաթուղիկոսը պէտք է ուսումնասիրած լինի և գոնէ ուսումնասիրելու կարողութիւն ունենայ և այն ազգերի կեանքի պայմանները, որոնց մէջ ապրում է իւր ժողովուրդը և որոնց շահերի հետ շփվում են իւր ժողովրդի շահերը։ Կաթուղիկոսը պէտք է լինի ժողովրդական մարդ։ Նա պէտք է խորասուզուող լինի իւր ժողովրդի պիտոյքների ովկիանոսի մէջ, նրա ցաւերը հասկանայ և դարմանէ... Նա պէտք է սրբէ հայրաբարոյ կրեկցութեամբ իւր ժողովրդի արտասուքները... Նա պէտք է լսէ նիւթապէս անապահով պաշտօնեաների, ուսումնածարաւ մանուկների, Աստուա-

ծային կենդանի խօսք խնդրող ժողովրդի և դէպի իրան դիմող ամեն մի ալաչողի ձայները... Նա պէտք է հովանաւորէ և խնամէ իւր բազմակարիք և թշուառացեալ ժողովրդին... Ահա թէ որչափ ծանր է կաթուղիկոսի լուծը և որչափ մեծ են նրա պարտականութիւնները։ Բայց քանի՞—քանի՞ անարժաններ և անպիտաններ յանդգնում են և անազնիւ միջոցներով աշխատում են մօտենալ այս սուրբ պաշտօնին... Սրբազան հայրեր! սուրբ և նուիրական է կաթուղիկոսական պաշտօնը, իսկ ծանր և դժուար է նրա լուծը... Թո՛ղ Զեզանից իւրաքանչիւրը լրջմտութեամբ կշռէ իւր ոյժը և արժանաւորութիւնը. պատասխանատուութիւնը մեծ է... Երևակայական անցեալից փոխուել ենք գիտակցութեան ներկայի մէջ... Ով որ կը յանդգնի անարժանաւորապէս բարձրանալ մեծ Գրիգորի Գահի վրայ, նա, հասարակական կարծիքի անողոք դատավճռի համաձայն, ամենախայտառակ կերպով կը ծաղրուի աշխարհի առաջ... Իսկ նրա անունը և յիշատակը կը դատապարտուեն յաւիտենական նզովքների... «Զօգուտն ձեր դուք գիտէք»։

Գուցէ շատերը իմ ասածները չափազանցութիւն համարեն և պատասխանեն, որ իմ պահանջների համաձայն մարդ չկայ ներկայումս մեր հոգևորականութեան մէջ։ Այո, գուցէ կատարե-

ապէս համապատասխանող չկայ, բայց գոնէ աշխատենք եղածներից ընտրել ամենաարժանաւորին։ Եւ ես կասեմ, որ վերոյիշեալ պահանջներին ընդհանրապէս համապատասխանող մարդիք, կան մեր հոգևորականութեան մէջ, բայց թէ քանու մինչև այսօրս լաւ յայտնի չեն նրանք մեր ընդհանուր հասարակութեան, դորա պատճառը պէտք է որոնել նրանց համեստութեան մէջ, որոնք չեն կամեցել շատերի նման վարձկան հրապարակախօսների միջոցով հռչակել իրանց անունները, իսկ հրապարակախօսները չեն կամեցել անվարձ կերպով կատարել իրանց պարտականութիւնը և ներկայացնել հասարակութեան նրանց արժանաւորութիւնների ճիշտ նկարագիրը։

Հայ ժողովուրդը ընտրում է կաթուղիկոս, բայց մինչև այսօր նա չը գիտէ, թէ այդ պաշտօնի համար քանչ արժանաւոր մարդիք կան իր մէջ և ովքեր են։ Այդպիսի գէպքերում պարտականութիւնը ընկնում է ժողովրդի կարծիքի առաջնորդ համարուած—հրապարակախօսի վերայ, որը պէտք է աշխատէ ազգի մէջ եղած արժանաւոր մարդիքների մասին հաւաքել տեղեկութիւններ և առանց աղաւաղելու առաջարկել հասարակութեան ծանօթանալու։ Այս մեծ գործի ժամանակ հրապարակախօսը պէտք է մոռանայ ամեն անձնական համակրութիւն կամ հակակրութիւն և

անաչառութեամբ հասարակութեան պէտք է ներկայացնի իր թշնամի կամ բարեկամ արժանաւորներին իրանց իսկական պատկերներով։ Հրապարակախօսը պէտք է բթացնէ իւր բոլոր զգայարանքները, որոնք կարող էին զգալ թշնամական կամ բարեկամական ազդեցութիւն։ Նա պէտք է մոռանայ այն ամենը, ինչ որ անձնական է և պէտք է խօսէ այն, ինչ որ իսկապէս կայ։ Նա պէտք է նուիրուի այն բանին, ինչ որ լաւ և հասարակական է։ Բայց ցաւալին սա է, որ ինչ որ ես այստեղ ասեցի հրապարակախօսի վերաբերութեամբ, այս բոլորը աւելի ընդարձակ կերպով և բանաստեղծական նկարագրութեամբ ասել է և ասում է ամեն մի հրապարակախօս, իսկ բանից դուրս է գալիս, որ այն բանը, ինչ որ ինքը քարոզում է ուրիշներին, իրան մէջ գործադրութիւն չէ գտնում. նա դաւաճանում է, իր քարոզած գաղափարներին և իր ասածների հակառակ է գործում...—Տեսնում էք մի հրապարակախօս, որը իւր հեղինակութիւնների մէջ շարունակ քարոզում է ազնուութիւն, անկողմնապահութիւն և ճշմարտասիրութիւն, իր պաշտօնակիցներին մեղադրում է անազնիւ շահախնդրութեան և կողմնապահութեան մէջ, իր բանաստեղծական տաղանդով, իր մի քանի հետաքրքիր գրուածքներով գրաւել է ընթերցող հասարակութեան մի

մասի համակրութիւնը, որը նրա աշխատութիւնը վարձատրելու նպատակով պատրաստվում է տանել նրա գրականական գործունէութեան քսան և հինգ ամեայ յոբէլեանը։ Այդ միջոցին զարթնում է կաթուղիկոսական խնդիր, ամեն մէկը այդ խնդրի վերաբերութեամբ յայտնում է իւր կարծիքները, պաշտպանում է մի որ և է անձի ընտրելիութիւնը։ Հրապարակ է դուրս գալիս և մեր յիշած հրապարակախօսը, սկսում է գրել մի շարք յօդուածներ։ Հասարակութիւնը մեծ յոյսեր ունի դրա վրայ, անհամբերութեամբ կարդում է նրա յօդուածները, ցանկանալով իմանալ նրա անաչառ կարծիքները։ Մեր հրապարակախօսը օգուտ է քաղում դէպքից. նա յենուած իւր հեղինակութեան վերայ և ժողովրդեան կողմից ցոյց տրուելի համակրութիւնից հպարտացած, կարծում է, որ իւր ամեն մի խօսքը հալած իւղի տեղ կ'ընդունուի։ Նա սկսում է արտայայտել իւր մտքերը և ի՞նչ էք տեսնում, այդ մարդը, որ այնքան մեծ ոգևորութեամբ քարոզում էր ազնուութիւն, անկողմնապահութիւն և յարձակվում էր իր հակառակորդների վրայ, մեղադրելով նրանց շահախնդրութեան, անազնուութեան և իրանց անարժան կանդիդատներին պաշտպանելու մէջ,—ահա նոյն իսկ այդ մարդը սկսում է նոյնը անել աւելի անազնիւ կերպով. նա յայտնապէս, առանց կարմ-

ելու ստորացնում և պախարակում է արդէն յայտնի արժանաւորներին, իսկ բարձրացնում և պաշտպանում է անարժաններին և անպիտաններին... Բայց ես դառնամ կաթուղիկոսական ընտրելիներին։

Որքան ես յիշում եմ, Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովը, կաթուղիկոսական պաշտօնի համար ի նկատի էր առած եօթը ընտրելիներ։ Ես կաշխատեմ համառօտապէս խօսել այդ եօթը անձնաւորութիւնների մասին և ընթերցող հասարակութեան ծանօթացնել դրանց հետ, որքան իմ ձեռք բերած տեղեկութիւնները ինձ կը ներեն։

ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ, Կ. Պոլսի այժմեան պատրիարքը յայտնի է ամենքին։ Նա իր ուսման ընթացքը աւարտել է Կ. Պոլսի Խաս-գիւղ թաղում գտնուող Ներսիսեան դպրոցում և այնուհետև վարել է զանազան պաշտօններ հոգևոր—ազգային ասպարիզում, իսկ հանգուցեալ Գէորգ Դ—ի ընտրութեան ժամանակ 1866 թ. տաճկա-հայերի կողմից Էջմիածին գնացած պատգամաւորներից մէկն էր։ 1874 թ. նա ընտրուեցաւ Կ. Պոլսի պատրիարք, բայց մինչև վերջին ռուս-տաճկական պատերազմը, այսինքն մինչև Տաճկա-Հայաստանի խնդրի զարթնելը նա ընդհանրութեան յայտնի չէր։ Երբ Բերլինում ստորագրուած դաշնագրի 61-դ յօդուածը նուիրուե-

ցաւ Տաճկա-Հայաստանի բարենորոգումներին, այդ օրից սկսուեցաւ Ներսէսի քաղաքագիտական գործունէութիւնը եւրոպական դիպլոմատների հետ այս խնդրի ասպարիզում։ Ներսէսը իւր պատրիարքութեան ժամանակամիջոցում, այդ խնդրի քաղաքական ասպարիզում ցոյց տուեց շատ փայլուն կէտեր, որոնք թէ և իսկապէս ոչինչ չօգնեցին այդ խնդրի իրագործման, բայց քաղաքական շատ յաջող հանգամանքներ և այլ դէպքերը նպաստեցին Ներսէսի անունը ընդհանրացնելու և նրան տաճկա-հայերի խնդրի դիւցազն հռչակելու։ Նա այժմ 45 տարեկան է։ Լեզուներից բացի լաւ հայկաբանութեան, թէ գրաբառի և թէ աշխարհաբառի մէջ, գիտէ ֆրանսիերէնը և տաճկերէնը։ Նրա գլխաւոր արժանաւորութիւնը, որով և հռչակուեց նրա անունը, քաղաքագիտական ընդունակութիւնն է։ Կաթուղիկոսական ընտրելիութեան մասին խօսելով, Ներսէսը իւր քաղաքագիտական ընդունակութիւնով գուցէ աւելի շատ գործ կարող է կատարել պատրիարքական պաշտօնով Կ. Պոլսի մէջ, քան թէ կաթուղիկոսական պաշտօնով Էջմիածնի մէջ։ Այլ խօսքով, Ներսէսը աւելի ընդունակ է քաղաքագիտութեան, այսպէս ասած արտաքին գործերի կառավարութեանմէջ, քան թէ կաթուղիկոսութեան, ներքին, եկեղեցական գործերի կառավարութեան մէջ։

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐ

ՄԿՐՏԻՉ ԱՐՔ-ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽՐԻՄԵԱՆԸ նոյնպէս յայտնի է ամենքին։ Նա իւր սկզբնական ուսումը ստացել է Վանայ ծովակի վանքերում, իսկ Կ. Պոլսում նա ընդունել է իւր զարգացումը։ Նա ճանապարհորդել է Կովկասը—Արարատեան նահանգը, Պարսկաստանը և Պալեստինը—Երուսաղէմը։ Գրականութեան մէջ յայտնի է նա «Հրաւիրակ, Արարատեան», «Հրաւիրակ երկրին Աւետեաց», «Մարգարիտ արքայութեան երկնից», «Հայրենիք», «Վանգոյժ» և այլ հեղինակութիւններով։ Նա յայտնի է և որպէս խմբագիր «Արծիւ Վասպուրականի» ամսագրով, որոնց բոլորն էլ արտայայտում են մինչև ֆանատիկոսութեան հասած ազգասիրութիւն։ Խրիմեանը վարել է և ուսուցչական և առաջնորդական պաշտօններ, թէ Կ. Պոլսում և թէ Հայաստանում, իսկ Վարագայ վանքում նա հիմնել է «ծառանգաւորաց» դպրոց։ 1869 թ. Խրիմեանը ընտրուեցաւ Կ.Պոլսի պատրիարք, բայց որովհետև կառավարչական ընդունակութիւնից և գործառնական հեռատեսութիւնից զուրկ էր, այդ պատճառով նրա ձեռնարկած գործերի մեծ մասը մնացին թերի և նպատակին չը հասան և նա չորս տարի անշարժ պատրիարքութիւն անելուց յետոյ, Ազգային ծողովի և իր մէջ տեղի ունեցած խռովութիւնների պատճառով, հրաժարուեցաւ պաշտօնից։ Խրիմեանի անունը հռչակելուն նպաստե-

ցին նոյնպէս ոչ այնքան նրա գործունէութիւնը, որքան յաջող հանգամանքները։ Նա այժմ մօտ 70 տարեկան է։ Լեզուներից բացի լաւ հայերէնը չը գիտէ ոչ մի լեզու։ Նրա գլխաւոր արժանաւորթիւնը, որով և հռչակուեցաւ նա, թանդ ազգասիրութիւնն է և բանաստեղծական տաղանդը։ Կաթուղիկոսական ընտրելիութեան մասին խօսելով, Խրիմեանը իւր ազգասիրութիւնով և ազդու քարոզներով աւելի մեծ գործ կարող է կատարել իր հայրենի Հայաստանում, իրան լաւ ծանօթ ժողովուրդի մէջ, քան թէ կաթուղիկոսական պաշտօնով, կառավարչութեան անընդունակ լինելով։

ՄԵԼՔԻՍԵԴԷԿ ԱՐՔ-ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ,

Զմիւռնիայի այժմեան առաջնորդը Թովուզ (Գանձակի նահանգում) գիւղացի և քահանայի որդի է։ Նա իր ուսման ընթացքը աւարտել է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում։ Երջանկայիշատակ Ներսէս Ե-ը Թիֆլիս եղած ժամանակ շատ սիրում էր աշակերտ Մուրադեանին, որը կաթուղիկոսի կարգադրութեամբ իր գեղեցիկ շարադրած քարոզները կարդում էր Թիֆլիզի եկեղեցիների բեմից։ Մուրադեանը իր ուսման ընթացքը աւարտելով, նոյն դպրոցում նշանակուեցաւ նախ աւագվերակացուի և ապա տեսչի պաշտօնակատարի և Հայոց լեզուի և գրականութեան ուսուցչի պաշտօններում։ Նա վարում էր նոյնպէս ուսուցչի

պաշտօն Թիֆլիսի հարուստ ընտանիքներում։ Այնուհետև նա հրաւիրուեցաւ Շուշի, այնտեղի ուսումնարանի տեսչի և ուսուցչի պաշտօններով, ուր մի քանի տարի մնալով և ուսումնարանը բարեկարգելով, Մուրադեանը թողեց Շուշի և գնաց Կ. Պոլիս, որտեղ մի քանի ժամանակ մնալուց յետոյ Երուսաղէմի պատրիարքից հրաւիրուեցաւ ծառանգաւորաց դպրոցում, ուսուցչի պաշտօնով։ Պատրիարքը տեսնելով Մուրադեանի ընդունակութիւնը և նրա ապագան նախատեսելով, նրան միջոց տուեց զարգանալու։ Այդ օգնութիւնից քաջալերուած Մուրադեանը ճանապարհորդեց Եւրոպայի մի քանի երկիրներ—Ֆրանսիա, Գերմանիա, Շվէյցարիա, Մոլդավիա և Ռումինիա։ Մուրադեանը իւր ընդունակութեան և ինքնակրթութեան շնորհիւ Շվէյցարիայի Ցիւրիխ քաղաքի համալսարանում տուեց Աստուածաբանութիւնից քննութիւն և ամենայն յաջողութեամբ ստացաւ դոկտորի աստիճան։ Այնուհետև Ազգային ժողովի և պատրիարքի միաձայն ցանկութեամբ ընտրուեցաւ Զմիւռնիայի առաջնորդ, որ տեղի խռովեալ և կուսակցական ժողովրդի մէջ միաբանութիւն և հաշտութիւն ձգելով, հիմնեց օրիորդական առաջին ուսումնարանը։ Մուրադեանը դեռ Թիֆլիս եղած իւր պատանեկութեան ժամանակից յայտնի էր գրականութեան մէջ։ Նա աշխատակցում էր

պ. Մարկոս Ալպարէգեանի խմբագրած «Կռունկ Հայոց աշխարհի» ամսագրին, Գարեգին (իւր նախկին անուն) Մուրադեան ստորագրութեամբ։ Նա յայտնի է և «Պատմութիւն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ» գրքի աշխատութիւնով, որը մի գեղեցիկ և մինչև այժմ եղածներից գերազանց դասագիրք է մեր եկեղեցական պատմութեան։ Նա յայտնի է և «Եղծ բանաքաղութեան Զամուռճեան պատուելոյն», «Հայոց լեզուի քերականութիւնով» և ուրիշ հեղինակութիւններով։ Մուրադեանը այժմ 52 տարեկան է։ Լեզուներից բացի լաւ Հայկաբանութեան թէ գրաբառի և թէ աշխարհաբառի մէջ, գիտէ ռուսերէնը, ֆրանսիէրէնը, գերմաներէնը, իտալերէնը, արաբերէնը, տաճկերէնը, լատիներէնը և յունարէնը, իսկ առարկաներից լաւ ծանօթ է ֆիզիքայի, քիմիայի և մատեմատիքայի հետ։ Բացառապէս ուսումնասիրած է ազգային պատմութիւնը և գրականութիւնը, նոյնպէս և եկեղեցական պատմութիւնը, իսկ Աստուածաբանութիւնից, ինչպէս վերև տեսանք, դոկտորի աստիճան ունի։ Մուրադեանը իւր գործունէութեան մէջ ցոյց է տուած և կառավարչական շատ ընդունակութիւններ, որպէս և Զմիւռնիայի պէս նշանաւոր թեմում։ Նա, ինչպէս արժանաւոր անձնաւորութիւն, յայտնի է թէ ռուսա—Հայերին, թէ տաճկա-Հայերին և թէ ար-

տասահմանեան հայերին, առաւելապէս Էջմիածնի, Կ. Պոլսի և Երուսաղէմի հոգևոր դասերին։ Կաթուղիկոսական ընտրելիութեան մասին խօսելով, անկողմնապահ ընթերցողը այս տեղեկութիւններից կ'եզրակացնի, որ այդ մեծ պաշտօնի համար, Մուրադեանը պարունակում է իր մէջ շատ արժանաւորութիւններ...

ԵՍԱՅԻ ԱՐՔ-ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ,

Երուսաղէմի այժմեան պատրիարքը ծնուեցաւ 1821 թ., Կեսարիայի (փոքր Ասիայում) Թալաս գիւղում։ Նա 13 տարեկան հասակում գնաց Կ. Պոլիս և այնտեղ վեց տարի շարունակ պարապեցաւ հիւսնութեան արհեստով։ Յետոյ գնաց Երուսաղէմ և չորս տարու չափ պարապեցաւ գրագիտական ուսումով և նոյն տեղ վարեց դպրոցի և տպարանի տեսչութեան պաշտօնները, որոնց ժամանակ և հաստատեց մի թանգարան, 2000-չափ գրքեր ցուցակագրելով։ Սրբազանը ունենալով լուսանկարչական ձիրք և եռանդ, իւր այդ արհեստը կատարելագործելու նպատակով դիմեց նախ Կ. Պոլիս և յետոյ Փարիզ և Մանչեսթեր, որ և կատարեալ յաջողութիւն ստացաւ իր սիրած արհեստի մէջ։ Այնտեղից դառնալով Երուսաղէմ, ընտրուեցաւ նոյն տեղի պատրիարք։ Նա այժմ 63 տարեկան է։ Լեզուներից բացի հայերէնը, գիտէ ֆրանսիերէնը, անգլիերէնը, արաբերէնը

և տաճկերէնը, իսկ առարկաներից Ֆիզիքա և քիմիա։ Բացառապէս սրբազանը սիրահարուած է լուսանկարչական արհեստի վրայ. նա յայտնի է իբրև լաւ լուսանկար։ Կաթուղիկոսական ընտրելիութեան մասին խօսելով, Եսային չէ ներկայացնում ինքն ըստ ինքեան մի մեծ արժանաւորութիւն այդ մեծ պաշտօնի համար։ Նա գուցէ աւելի գործ կարող է կատարել իւր այժմեան պաշտօնով Երուսաղէմի պարտքերի վերաբերութեամբ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ (ԱՐԹԻՆ) ԱՐՔ-ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԵՀԱՊԵՏԵԱՆ, նախկին առաջնորդ Կարնոյ, այժմեան փոխանորդ Երուսաղէմի պատրիարքի, ծնուեցաւ 1821 թ. Եգիպտոսի Ալէքսանդրիա քաղաքում, արաբ ծնողներից։ Նա իւր սկզբնական ուսումը ստացաւ Երուսաղէմի վանքում և յետոյ գնաց Զմիւռնիա և մտաւ Մեսրոպեան վարժարանը, ուր երեք տարի մնալուց յետոյ գնաց Կ. Պոլիս և մտաւ Ամերիկացիների գիշերօթիկ վարժարանը։ Այնտեղ երեք տարի մնալուց յետոյ, իւր բարերար Երուսաղէմի Կիրակոս պատրիարքի ձեռնտուութեամբ գնաց Ամերիկայ և երկու տարի մնալով փոփոխակի Նիւ-Եորք և Բոստոն քաղաքներում, վերադարձաւ Կ. Պոլիս։ Սրբազանը վարել է ուսուցչական պաշտօն Կ. Պոլսի Լանկայի Լուսաւորչեան վարժարանում, Երուսաղէմում և այլ տեղերում։ Նա վարել է և պատրիարքական փոխանորդի պաշտօն

Կ. Պոլսում Մատթէոս և Գէորգ պատրիարքների ժամանակ և Երուսաղէմում այժմեան Եսայի պատրիարքի ժամանակ։ Սրբազանը երկար ժամանակ վարել է և առաջնորդական պաշտօն Էրզրումում (Կարին) և Խարբերդի չորս միացեալ վիճակներում։ Նա եղել է և քննիչ 1859 թ. Վանայ առաջնորդ Իգնատիոս վարդապետի և ժողովրդի մէջ եղած խռովութեան և 1865 թ. Աղթամարի Պետրոս կաթուղիկոսի սպանութեան գործերի։ Իսկ Յովհաննէս սրբազանին Երուսաղէմի պատրիարքական պաշտօնին հրաւիրելու, Յարութիւնը Կ. Պոլիս գնացած պատգամաւորներից մէկն էր։ Սրբազանը իւր առաջնորդական տեղերում կանգնել է մի քանի շէնքեր և ուսումնարաններ, որոնցից նշանաւորն է Էրզրումի օրիորդական վարժարանը։ Նա այժմ 63 տարեկան է։ Լեզուներից բացի լաւ հայերէնը, գիտէ անգլիերէնը, արաբերէնը և տաճկերէնը, իսկ առարկաներից ֆիզիքա և քիմիա. այլ և նա յայտնի է իբրև հմուտ երկրաչափ։ Կաթուղիկոսական ընտրելիութեան մասին խօսելով, թէ և Յարութիւն սրբազանը ներկայացնում է մի քանի արժանաւորութիւններ, բայց և այդ բոլորը դեռ բաւական չեն կաթուղիկոսական մեծ պաշտօնի համար։

ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ, Բրուսայի այժմեան առաջնորդը Հայ ազգին անմոռանալի Գէ-

որդ Դ-ի ձեռնասուն աշակերտ է։ Այս անձի մասին ձեռք բերած ընդհանուր տեղեկութիւններին նայելով, սրբազանը չէ պարունակում իր մէջ այնպիսի մի որ և է արժանաւորութիւն, որով նա կարող լինէր կաթուղիկոսական ընտրելի համարուել։ Գուցէ նա, մի մասնաւոր վիճակում կարող է առաջնորդական պաշտօն վարել, բայց կաթուղիկոսութիւն երբէք։

ՄԱԿԱՐ ԱՐՔ-ԵՊԻՍԿՈՊՈՍ, Էջմիածնի կաթուղիկոսական այժմեան տեղակալը ռուսա-հայոց հինաւուրց եպիսկոպոսներից մէկն է։ Նրա կաթուղիկոսական քուէարկութիւնը այս անգամ երրորդը կը լինի. նա քուարկուել է և Մատթէոսի և Գէորգի հետ։ Սրբազանը վարել է իր կեանքի մէջ զանազան պաշտօններ, թէ Էջմիածնում և թէ այլ տեղերում, ուր ի միջի այլոց ամբողջ տասն և հինգ տարի Թիֆլիզումն էր, թեմական առաջնորդի պաշտօնով, իսկ յետոյ նոյնպիսի պաշտօն նա վարեց Բեսսարաբիայի թեմում, Քիշինև քաղաքում։ Սրբազանը իբրև հինաւուրց եպիսկոպոս, կատարել է շատ նշանաւոր պաշտօններ և յանձնարարութիւններ, Ներսէս և Մատթէոս կաթուղիկոսների ժամանակ, բայց այդ մասին դեռ ևս ոչինչ հաստատ բան չի կարելի ասել, որի մասին վկայութիւնները, դոկումէնտները թաղուած են Էջմիածնի և զանազան կոնսիստորիաների արխիւ-

ներում։ Ապագան կարող է լոյս ձգել այդ բոլորի վրայ և հրապարակ հանել ճշմարիտ իրականութիւնը... Սրբազանը բացի հայերէնից չը գիտէ ոչ մի լեզու կամ առարկայ։ Նա շուտով կը լրանայ 80 տարեկան. ծնունդով քուրդ է։

Որովհետև կաթուղիկոսական խնդիրը զարթնելու օրից հասարակական կարծիքը մեծ մասամբ կենտրոնացած է առաջին երեք անձինքների վերայ, ուստի այս եօթը անձնաւորութիւնների մասին ընդհանուր տեսութիւն անելուց յետոյ, նորից վերադառնում եմ այդ առաջին երեքին, այսինքն Խրիմեանին, Ներսէսին և Մուրադեանին։

Վերջերումս ռուսա-հայոց և տաճկա-հայոց մամուլների մէջ գրուող զանազան յօդուածները պաշտպանեցին զանազան անձինքների ընտրելիութիւնը։ Այդ յօդուածներից շատերը մէկի արժանաւորութիւնը ցոյց տալու համար, անհրաժեշտ համարեցին միւսի արժանաւորութիւնը նսեմացնել։ Այդպիսի յօդուածներից նշանաւորներն են պ. Մէլիքզադէ—Բաֆֆիի «Կաթուղիկոսական հարցի առթիւ» վերնագրով մի շարք յօդուածներ, որոնք տպուեցան 1883 թ. «Մշակ»-ի №№ 194, 195, 196, 198, 201, 204։ Զը նայելով, որ այդ յօդուածները միմեանց շարունակութիւն են կազմում, բայց դրանցից իւրաքանչիւրը ներկայացնում է կարծես առանձին և միւսին հակառակ ուղղու-

թիւն։ Օրինակ. յօդուածներից մէկը ցոյց է տալիս կաթուղիկոսական պաշտօնի բարձր նշանակութիւնը, միւսը իւր ուղղութեամբ կորցնում է նրա նշանակութիւնը. մի այլ յօդուած խնդրի մեծ նշանակութիւնը ցոյց տալով, քարոզում է մոռանալ ամեն անձնական կրքերը և պաշտպանել արժանաւորութիւնը, յաջորդ յօդուածը բացարձակ ստորացնում է յայտնի արժանաւորին և բարձրացնում է անարժաններին։ Պարզեմ իմ միտքը. պ. Մէլիքզադէի յօդուածներից մէկը՝ «Մշակի» № 198 բացարձակ նսեմացնում է Մուրադեանին, իսկ ջատագովում է մի քանիսին, որոնց վրայ կը խօսեմ յետոյ։ Եթէ պ. Մէլիքզադէն լինէր այն հրապարակախօսներից, որոնց շարունակ մեղադրում են անազնուութեան և շահախնդրութեան մէջ, ես ուշադրութիւն չէի դարձնի այդ յօդուածների վերայ, բայց որովհետև պարոնը այն հրապարակախօսներիցն է, որոնք իրանց հակառակորդներին շարունակ մեղադրում են ստորութեան և կողմնապահութեան մէջ, ուստի թող ներէ ինձ յարգելի վիպասանը, եթէ փոքր ինչ խստութեամբ վերաբերուեմ նրա յօդուածներին։

Պ. Մէլիքզադէն խօսելով կաթուղիկոսական ընտրելիների մասին, միակ արժանաւորներ այդ պաշտօնի համար յայտարարում է Խրիմեանին և Ներսէսին («Մշակ» № 196)։ Իրաւ է այդ երկու

անձինքներին ամենքս էլ յարգում ենք, բայց առաւելապէս պէտք է յարգել ազգային շահերը և կաթուղիկոսական պաշտօնը։ *)

ԽՐԻՄԵԱՆԻ մասին խօսելով, ես վերևումն էլ ասեցի, որ իրաւ է սրբազանը շատ ազգասէր, լաւ քարոզիչ, տաղանդաւոր բանաստեղծ և յարգելի մարդ է, բայց կաթուղիկոս լինել չէ կարող, որովհետև բացի կառավարչական ընդունակութիւնից, նրան դեռ պակաս են այնպիսի շատ յատկութիւններ, որոնք անհրաժեշտ են այդմեծ պաշտօնը ստանձնողի համար։ Վերևում տեսանք, որ Խրիմեանը դեռ Կ. Պոլսում պատրիարք եղած ժամանակ, ցոյց տուեց իր անընդունակութիւնը և պատճառ դարձաւ մեծամեծ խռովութիւնների։ Դեռ շատերը կը յիշեն, որ 1883 թ. Խրիմեանը իւր ծայրահեղ միամտութեան և անհեռատեսութեան շնորհիւ, առանց բովանդակութիւնը գիտենալու, Վանում ստորագրեց մի ինչ որ թուղթ, իսկ յետոյ բանի էութիւնը հասկանալով, սկսեց բողոքել թէ իրան խաբել են։ Այդպիսի անհաշիւ ստո-

*) Թէև «Հայաստանի սովը և Էջմիածինը» գրքոյկիս 42 երեսում ես գովաբանել եմ Ներսէսին և Խրիմեանին, բայց ուրիշ հարց է նրանց հռչակը և ուրիշ հարց է կառավարչական ընդունակութիւնը, կաթուղիկոսական պաշտօնի համար։ Ես դարձեալ կը յարգեմ նրանց իբրև արժանաւոր հոգևորականներ, բայց ոչ իբրև կաթուղիկոսացուներ։

բազրութիւններով կաթուղիկոսը շատ մեծամեծ և անդառնալի վնասների պատճառ կարող է դառնալ...

Խրիմեանը իւր յատկութիւններով ներկայանում է աւելի մի անձնուրաց կրօնաւոր, քան թէ մի բարձրաստիճան հոգևորական։ Նրա կենցաղավարութեան եղանակից պատմվում են շատ անեկդոտներ, որոնք յիշեցնում են հինաւուրց աշխարհատեացներին։ Դեռ Կ. Պոլսի պատրիարք եղած ժամանակ պատահել է, որ նա իր բոլոր ունեցած փողը, առանց մտածելու տուել է հանդիպած չքաւորին, իսկ ինքը, պաշտօնական անձանց մօտ գնալու ժամանակ, փող չունենալու պատճառով, մի քանի վերստ տարածութիւն անցել է ոտքով, իսկ երբեմն էլ կառքին վճարելու վարձը պահանջել է հանդիպած մարդուց։ Պատմում են, թէ նրա պատրիարքութեան ժամանակ, Հայաստանի կողմերից մէկ աղքատ հայ քահանայ դիմում է Կ. Պոլիս և Խրիմեանից օգնութիւն է խնդրում։ Սրբազանը փող չունենալու պատճառով, իր միակ նոր ֆարաջան տալիս է քահանային, իսկ ինքը երկար ժամանակ մնում է հին, մաշուած ֆարաջայի մէջ։ Կեանքի պարզութիւնը և բարեգործութիւնը շատ լաւ բաներ են, բայց այսքան ծայրահեղութիւնով իր ազգի և պաշտօնի պատիւը օտարների առաջ ստորացնելը, անխոհեմութիւն է։ Իմ

խօսքերը աւելի ապացուցանելու համար, այստեղ առաջ եմ բերում Խրիմեանի կաթուղիկոսացութեան այժմեան պաշտպան պ. Մելիքզադէի, սրբազանի մասին, նախկին գրուածքից հետևեալ կտորները։

«Խրիմեանը իւր կեանքում շատ անգամ մեծ գումարներ ձեռքը ձգեց, բայց նա մնաց միշտ աղքատ, միշտ պարտքերի տակ խրուած։ Խրիմեանը խիստ անփոյթ էր դէպի իւր անձնական վայելչութիւնը, դէպի իւր բարեկեցութիւնը, նա իւր վերայ ոչինչ չէր վատնում, իսկ բնաւորութեամբ, եթէ կարելի է այդպէս կոչել կ օ մ ո ւ ն ի ս տ էր։ Նա որպէս անհաշիւ կերպով ստանում էր, նոյնպէս անհաշիւ կերպով սպառում էր։ Հանդիպած աղքատին Խրիմեանը պատրաստ էր իւր վերջին փարան տալ և ինքը սոված մնալ։ Սեպհականութիւնը նրա համար ոչինչ նշանակութիւն չունէր, երբ նա ծառայում էր ընդհանուրի օգտին։—

«Խրիմեանը չէր ծնուած բարձր կոչման համար, որ պատրիարքական աթոռի վերայ փթեցնէր իւր կեանքը, և ձեռքը, որ սովոր էր մուզաների շնորհած քնարը հնչեցնել, պարապեցնէր քաղաքական և կրօնական ժողովների վճիռները ստորագրելով։

«Խրիմեանը հոգւով բանաստեղծ է, իսկ սրտով առաքեալ։ Նա յիշեցնում է մեզ հինգերորդ դարու անձնուրաց աբեղաներին, որք հոգևոր զինուորութեան ցուպը ձեռքներին կրած, հուրի և

սուրի միջից անցնելով պտտում էին Հայաստանում, ուսում, գիտութիւն և կրօնք էին տարածում։—

«Խրիմեանի պատրիարքութեան չորս տարին անցաւ խիստ անգոյն կերպով. նա մի երևելի բան չարդիւնաբերեց, որովհետև նա կառավարչական մարդ չէր։ Այլ խօսքով, նա ուսած չէր դիպլոմատիկական խորամանկ ձևերը, որով հմուտ քաղաքագէտը պտտեցնում է իւր նենգաւոր մեքենան։

«Արդարև, Խրիմեանը եռանդոտ, անհանգիստ և անվաստակելի բնաւորութիւններից մինն է։ Նա սիրում է գործել, ընկնել, կանգնել և միշտ պատերազմել վտանգների մրրկածուփ խռովութեան հետ։ Բայց այդ բոլորը բաւական չէր մի սահմանադրական վարչութեան գլուխ լինելոյ համար։ Խրիմեանը՝ որպէս շատ բանաստեղծներ՝ իդէալիստ է։ Նա համբերութիւն չունէր ազգային գործերի կանոնաւոր կերպով և յաջորդաբար բարեկարգուելուն։ Նա պահանջում էր հրաշքներ։ Նա կամենում էր Հայոց դեռ նոր տգիտութեան թմրութենից աչքը բացած ժողովուրդը յանկարծ վերաստեղծել և Եվէյցարիայի նման ձևակերպել։ Խրիմեանը անհամբեր էր։ Այդ պատճառաւ մենք տեսնում ենք նորա բոլոր ձեռնարկութիւնները, բոլոր հիմնարկութիւնները՝ այնքան երերուն և անտևողական են, որ օդային մետէորայների նման յանկարծ ցոլանում են և շուտով անյայտանում

խաւարի մէջ։ Նա ամեն բան սկսում է, ամեն բան ուզում է անել, բայց խիստ սակաւ է յաջողվում նրան։—

«Գնա՛ ազգի բարեկամ, ճակատագիրը կոչում է քեզ. պատրիարգութեան սահմանափակ-պաշտօնական շրջանը քո տեղը չէ։ Դո՛ւ, որպէս Իսրայէլը Բաբելօնում, միշտ կարօտում էիր քո նազելի Սալիմին— դա Վասպուրականն է։ Գնա՛, կրկին սիրէ Վարագը, սիրէ Այգեստանի ուռիները, Արծիւը և Ծառանգաւորաց դպրոցը քեզ սպասում են....» (Մշակ»-ի № 49, 1873 թ.)

Ահա այսպիսի գոյներով է նկարագրել պ. Մէլիքզադէն սրբազան Խրիմեանին, իսկ այժմ վերկենալ և պաշտպանել նորա ընտրելիութիւնը կաթուղիկոսական ծանր պաշտօնի համար, դա պատիւ չէ բերում մի յայտնի հրապարակախօսին, որը շարունակ քարոզում է ազնուութիւն։

ՆԵՐՍԷՍԻ մասին խօսելով, ես վերևումն էլ ասեցի, որ սրբազանը դուցէ աւելի գործ կարող է կատարել Կ. Պոլսում պատրիարքական պաշտօնով, քան թէ Էջմիածնում կաթուղիկոսական պաշտօնով։ Շատերը հաւատացնում են, որ պատրիարքութիւնը աւելի ծանր պաշտօն է, քան թէ կաթուղիկոսութիւնը, բայց ես կասեմ ընդհակառակը։ Լաւ պատրիարքութիւն անողը կարող է դժուարանալ կաթուղիկոսութեան մէջ։ Կ. Պոլսում կա-

քաղաքական ժողով, կայ կրօնական ժողով, կայ տնտեսական ժողով, վերջապէս կայ և Ազգային ժողով, որոնցից իւրաքանչիւրն էլ զբաղուած է իր մասնագիտութեան վերաբերեալ գործերի կառավարութիւնով, իսկ պատրիարքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ այսպէս ասած, այդ ժողովների վճիռները ստորագրող։ Ես չեմ ուրանում, որ պատրիարքը ունի այդ ժողովներին նախագահելու, ուղղութիւն տալու և այլ շատ իրաւունքներ, բայց և այնպէս նրա իրաւունքները աւելի սահմանափակ են, քան թէ կաթուղիկոսինը։ Հասկանալի է, որ պատրիարքից այնքան մեծ ընդունակութիւն և հմտութիւններ չեն պահանջվում, որքան կաթուղիկոսից, որի անձնական ընդունակութիւնից և բազմատեսակ հմտութիւններից է կախուած գործերի բոլոր տեսակների կառավարութիւնը։

ՄՈՒՐԱԴԵԱՆԻ մասին խօսելով, ես վերևումն էլ ասեցի, որ սրբազանը կաթուղիկոսական պաշտօնի համար շատ արժանաւորութիւններ է պարունակում իր մէջ։ Իսկ այժմ համարձակ կարող եմ ասել, որ նրան կարելի է համարել մեր հոգևորականութեան մէջ երևացող այն հազուադիւտ անձինքներից մէկին, որի մէջ միանգամից շաղկապուած գտնվում են շատ տեսակ արժանաւորութիւններ։ Կաթուղիկոսական եօթը ընտրելիների մէջ Մուրադեանը միակ մարդն է, որ ունի

Աստուածաբանութեան դոկտորի աստիճան, որ գիտէ էջմիածնին տիրող պետութեան պաշտօնական— ռուսաց լեզուն, որ գիտէ և կլասիքական լեզուներ և այլն...Բացի այս բոլորից, նա ունի և մի մեծ առաւելութիւն. նա ծնուել, սնուել, զարգացել և գործել է ռուսա-հայերում, ճանապարհորդել է, գործել է և ուսում է առել տաճկա-հայերում և Եւրոպայի հայերում, իսկ այժմ առաջնորդ է դարձեալ տաճկա-հայերում։ Հայ ազգի այդ ցրուած բոլոր մասերին նա ուսումնասիրել է և լաւ ծանօթ է նրանց տեղական կեանքի, սովորութիւնների և կարիքների հետ...Նա երկար ժամանակներով ապրել է այդ ցրուած ժողովրդի մէջ...Մուրադեանը դեռ ևս մեծ յարգանքով յիշվում է Թիֆլիզում. մանաւանդ ինտելիգենտներից շատերը մեծ համակրութեամբ են վերաբերվում դէպի նա։ Կաթուղիկոսական ընտրելիութեան մասին խօսելով, ես կասեմ, որ Ներսէսից կամ Մուրադեանից որին էլ որ ընտրենք, մենք կ'ունենանք լաւ կաթուղիկոս, բայց և համարձակ կարող եմ ասել, որ այդ ծանր պաշտօնի համար աւելի գերադասելի է Մուրադեանը։ Այս ճշմարտութիւնը բացարձակ վկայել է ինքը՝ սրբազան Ներսէս պատրիարքը։ Այս կարծիքի են և ուրիշ շատերը, որոնք ճանաչում են սրբազանին, թէ ռուսա-հայերից և թէ

տաճկա-Հայերից, առանձնապէս ինտելիգենցիային պատկանողները։

Մէլիքզադէն խօսելով Մուրադեանի մասին, ասում է, որ ընդհանուր Հայոց կաթուղիկոսի աթոռից դեռ շատ հեռու է կանգնած նա («Մշակ», № 198)։ Եթէ այս միաքը յայտնէր մի այնպիսի մարդ, որը մեր գրականութեան մէջ մի անյայտ անձն լինէր, ես կը լռէի, բայց որ այդ անողը Մէլիքզադէ-Բաֆֆին է, որը իրան ձևացնում է քաջ ծանօթ մեր հոգևորականների գործունէութեան և «քունչ ու պուճախի» հետ, և երբ դա այդպիսի անվայել կերպով անպատվում է արժանաւորութիւնը և ճշմարտութիւնը, դա շատ պախարակելի և ամեն կրիտիկայից ստոր վարմունք է... Ի՞նչն է ստիպել բանաստեղծ—հրապարակախօսին այդ յանցանքը գործելու,—ահա մի հետաքրքիր հարց...Նա իր գրուածքի մէջ ո՛չ մի հաստատ փաստ, ո՛չ մի ապացոյց առաջ չի բերում իր գրածները ապացուցանելու։ Մուրադեանին կաթուղիկոսական ընտրելիութիւնից հեռու քշելու նպատակով, նա առաջ է բերում այս ծիծաղելի փաստը, թէ կաթուղիկոս ընտրուողը անպատճառ պէտք է Կ. Պոլսի պատրիարք եղած լինի և թէ չէ կարելի հասարակ թեմական առաջնորդներից կաթուղիկոս ընտրել։ Չը գիտեմ իմ ասածը որքան ուղիղ կը լինի, բայց պ. Մէլիքզադէն, իբրև ան-

ցեալը լաւ ուսումնասիրող աւելի լաւ պէտք է գիտենայ, որ մեր եկեղեցական պատմութեան մէջ պատահել են դէպքեր, որ կաթուղիկոս ընտրուել է ոչ միայն հասարակ թեմական առաջնորդներից և վանահայրերից, այլ և ուղղակի աշխարհականներից։ Ես կը յիշեմ միայն Ներսէս-Մեծին, որը զինուորականութեան մէջ կրթուած և Հայոց Արշակ թագաւորի մօտ զինակրի պաշտօն էր վարում, և այդ մարդը այն պայծառ և լուսաւոր աստղներից մէկը դարձաւ, որոնք շատ քիչ անգամ են ցոլացել մեր եկեղեցական հորիզոնի վերայ։ Յիշեմ աւելի նորը, Ներսէս Ե-ը թեմական առաջնորդ էր, իսկ Մատթէոսը և Գէորգը պատրիարքներ էին, թող ընթերցողը դատէ, թէ սրանց մէջ որն աւելի արժանաւոր էր։

Մուրադեանին ստորացնողը չէ քաշվում և չէ խղճահարվում և իբրև նրանից բարձր և արժանաւորներ առաջ է բերում՝ Թիֆլիսի թեմի առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսին, Աստրախանի թեմի առաջնորդ Սուքիաս եպիսկոպոսին, Երևանի թեմի առաջնորդ Սուրէնեան Գէորգ եպիսկոպոսին, Սինոդի անդամ և գանձապահ Ներսէս եպիսկոպոսին։ Արիստակէս սրբազանը դեռ նոր եպիսկոպոս է, գուցէ բարի և առաջադէմ ձգտումներով և անտարակոյս բարձր է միւս մի քանի անարժան և անդարձունեայ հոգևորականներից, բայց նա դեռ ևս մի

այնպիսի զգալի արդիւնք և ընդունակութիւն չէ ցոյց տուել, որ նրան կարելի լիներ համեմատել մեր լաւ հոգևորականների հետ։ Մի որ և է շինութեան պատուհանների և սանդուղքների նորոգելը արժանաւորութիւն չէ համարվում։ Դեռ պէտք է գործել...Սուրէնեան Գէորգ եպիսկոպոսը դեռ ևս չէ ցոյց տուել ոչ մի տեսակ արժանաւորութիւն, բացի այն, որ նա Աղէքսանդրօպոլում յաջորդ եղած ժամանակ, արդեն տեղական եկեղեցիներում հոգեհանգիստ կատարել հանգուցեալ գիտնական Ստեփաննոս Նազարեանցի յիշատակին, քարոզելով ժողովրդին, թէ հանգուցեալը հայերի մէջ բաղաքականութիւն տարածող և Լուսաւորչական եկեղեցու քանդողն է։ Ներսէս եպիսկոպոսի միակ արժանաւորութիւնը նրա մէջն է կայանում, որ նա երբեմն «Մանկունիւ ընկ.» հռչակաւոր խմբի ամենապատուաւոր և գործող անդամներից մէկն էր, իսկ այժմ նոյն Ներսէս սրբազանը իրան ջատագովող Մէլիքզադէ—Ռաֆֆիի գործակալ — գրավաճառի պաշտօն է վարում Էջմիածնում։ Դալով Սուքիաս եպիսկոպոսին, ես կասեմ, որ թէև սրբազանը արժանաւոր, ազնիւ և եռանդոտ եկեղեցական է և վերը յիշուած երեք եպիսկոպոսներից բարձր է, բայց և այնպէս, նրան գերադասել և մինչև անգամ համեմատել Մուրադեանի հետ, —անկարելի է։ Եթէ

պ. Մէլիքզադէն անկեղծօրէն կամենում էր ազգին ծանօթացնել ռուսա-հայոց արժանաւոր հոգևորականների հետ, նա առաջին տեղը պէտք է շնորհէր Աղափիրեան Գրիգոր եպիսկոպոսին և Խորէն ծ. վ. Ստեփանէին, որոնք լաւ յայտնի են ռուսահայերիս և մինչև անգամ տաճկա-հայերից շատերին, և գործողներ են մեր մանկավարժական և գրականական ասպարէզներում, բայց իհարկէ, սրանց ևս չէ կարելի համեմատել Մուրադեանի հետ։ Ցաւալի է, որ մեռած անցեալի սիրահարները շատ քիչ ուշադրութիւն են դարձնում կենդանի ներկայի վրայ։ Նրանք աւելի մեծ ոգևորութեամբ են նկարագրում հարիւրաւոր տարիներից առաջ մահմետական հարեմների մէջ կատարուող սիրային յարաբերութիւնները, քան թէ ներկային հետաքրքրող և անհրաժեշտ կենսական հարցերը...

Ահա թէ ինչ կը նշանակէ մոլորեցնել հասարակական կարծիքը։ Ով որ հաւատում է պ. Մէլիքզադէի գրուածքի անկեղծութեանը և չէ ճանաչում նրանից անարգուած Մուրադեանին և յարգուած եպիսկոպոսներին, իհարկէ պէտք է մի և նոյն տեսակ գաղափարը կազմի յիշեալ անձինքների վերաբերութեամբ։ Անտարակոյս ես էլ նոյն վիճակին պիտի ենթարկուէի, եթէ ճանաչելիս չը լինէի այդ անձինքներին։ Առանց այն էլ վերջերումս շատացել են մեր մէջ շահախնդիր և կեղծաւոր

մարդիք, որոնք դէպի չարն են գործածում թէ խմբագրի և թէ հասարակութեան դէպի իրանց ունեցած հաւատարմութիւնը և ամեն մի դատարկ բանի համար պատրաստ են լրագրի ամբողջ երեսները լցնել, թէ այս ինչ եպիսկոպոսը այս արաւ կամ այն արաւ, նորան հաճոյանալու նպատակով, և այդպիսով լրագրի պատիւը ստորացնում են հասարակութեան առաջ... Մէլիքզադէի մասին խօսքս փոքր ինչ երկարեց, որովհետև նրանից ոտնակոխ եղած ճշմարտութեան վերականգնումը այդպէս էր պահանջում: Թէ և սրբազան Մուրադեանը, իբրև մի յայտնի արժանաւոր մարդ, կարօտ չէ իմ թոյլ պաշտպանութեան, բայց և այնպէս իմ նպատակն էր ցրել այն անձանց կարծիքները, որոնք պ. Մէլիքզադէի շնորհիւ կազմուել են, թէ նրանից անարգուած Մուրադեանի և թէ ջատագոված եպիսկոպոսների վերաբերութեամբ: Պէտք է մեծ խնայողութեամբ վարուել դէպի այն անձանց պատիւը, որոնք իբրև յայտնի արժանաւորներ, շատ ուշ ուշ են երևում մեր մէջ: Թո՛ղ ներէ ինձ յարգելի վիպասանը նկատել նորան, որ նա իւր այդ վարմունքով բաւական արատ բերեց թէ իրան և թէ «Մշակ»-ի անուան: Այդ առիթով մինչև անգամ ես ստացել եմ շատ նկատողութիւններ և նախատինքներ այն անձինքներից, որոնց առաջ ես միշտ ոգևորութեամբ

պաշտպանելիս եմ եղել թէ Նորան և թէ «Մշակ»-ին։ Բայց և այնպէս, ես այսուհետև էլ պարոնին յարգելու եմ իբրև տաղանդաւոր վիպասանին, բայց ոչ իբրև ճշմարտասէր և անկողմնապահ հրապարակախօսին։ Երանի թէ ես սխալուած լինէի...

Ես համառօտապէս իմ բարեկամական նկատողութիւնները արեցի պ. Մելիքզադէին, որպէս զի նա այսուհետև մի որ և է հարց քննադատելիս ի նկատի ունենայ ընդհանուրի շահերը և ինչ բանի մէջ մեղադրում է ուրիշներին ինքը նոյնը չանի և այդպիսով աւելի արատ չը բերի իր տաղանդաւոր վիպասանական հռչակին։ «Կայծերի» հերոս—Ասլանի ստեղծագործողին, որին յարգողներից մէկն եմ, վայել չէ հասարակական հարցի ժամանակ անձնականին վերաբերեալ համակրական կամ հակակրական զգացմունքներին տեղի տալ...

Վերջացնելով խօսքս, դիմում եմ Ձեզ ով ժողովրդի ներկայացուցիչ պատգամաւորներ և Ձեր խորին ուշադրութիւնը հրաւիրում եմ կաթուղիկոսական ընտրութեան ծանրակշիռ հարցի վերայ։ Ժողովուրդը հաւատացել և յանձնել է Ձեզ այդ մեծ խնդրի վճիռը կայացնելու։ Եթէ Դուք յարգում էք Հայաստանեայց Եկեղեցու և ժողովրդի իրական շահերը, եթէ անկեղծօրէն ցանկալի է Ձեզ Ազգի և Եկեղեցու յառաջադիմութիւնը և պայծառութիւնը, ուրեմն մոռացէք դէպի

ամեն մի ընտրելին ամեն մի անձնական Համակրութիւն կամ հակակրութիւն և ընտրեցէք կաթուղիկոս այն մարդուն, որը ամենից արժանաւոր և յարմար է Հայ-Եկեղեցու և ժողովրդի ժամանակակից կարիքներին. իսկ թէ ո՞րն է այդ արժանաւոր մարդը, այդ Դուք ինքներդ կարող էք լրջմտութեամբ դատել և հասկանալ։ Աշխատեցէք զգուշանալ։ Եթէ դուք այնքան անհեռատես կը գտնուէք, որ Եկեղեցու և ժողովրդի շահերը նորից կը մատնէք իր նախնթաց վնասներին, գիտացէք, որ Ձեր անունները երկար չեն կարող թագնուել խաւարի մէջ Մայր—Աթոռի ուրուականից։ Ապագան ամենայն զգուանքով և դառնագին անէծքներով կը մտաբերէ Ձեր յիշատակները և Ձեր անունները իրանց սև և ամօթալի գոյներով կ'արձանագրուեն պատմութեան արհամարհական բաժնում...

Տացէ Աստուած, որ Դուք արժանաւորապէս կատարէք Ձեր պարտականութիւնը և պաշտպանէք Ազգի և Եկեղեցու շահերը, որպէս զի Ծերունի Էջմիածնի Մայր-Աթոռի վերայ բարձրանայ մի լուսաւոր, հասկացող և արժանաւոր մարդ, որը կարողանայ օրինաւոր կերպով վարել իւր ստանձնած մեծ և ծանր պաշտօնը և ժամանակակից ոգւով կառավարել և խնամել իւր բազմակարիք ժողո-

վրդին, որի յառաջադիմութիւնը և բարոյութիւնը ուրիշ շատ անկեղծ սրտերի հետ միասին, ի բոլոր սրտէ ցանկանում է

Ա. Ս.